

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ ՅՈՒՐԻԿԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՏԵՂՑ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ
ԱՆՄԻՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԴՇԵԱՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՁԵՎ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մոնիցինգայալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2023

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ТАДЕВОСЯН АРМАН ЮРИКОВИЧ

ИНСТИТУТ НАРОДНОЙ ПРАВООТВОРЧЕСКОЙ ИНИЦИТИВЫ КАК ФОРМА
НЕПОСРЕДСТВЕННОГО НАРОДОВЛАСТИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ЕРЕВАН – 2023

**Ատենախոսության թեման հաստատվել է
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում**

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Վահե Վարդանի Ստեփանյան**,

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Աշոտ Հայկի Խաչատրյան**,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Լիլիա Արեգի Հակոբյան**

Առաջատար կազմակերպություն՝


Հայաստանի եվրոպական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի հուլիսի 11-ին ժամը 15:00-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2023 թվականի մայիսի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
իրավաբանական գիտությունների թեկնածու՝

 **Ջ.Տ. Հայրապետյան**

**Тема диссертации утверждена в
Академии государственного управления Республики Армения**

Научный руководитель:

доктор юридических наук, профессор **Вяге В. Степанян**

Официальные оппоненты:

доктор юридических наук, профессор **Ашот А. Хачатрян**,
кандидат юридических наук, доцент **Лилия А. Акопян**

Ведущая организация:


Европейский университет Армении

Защита состоится 11-го июля 2023 года в 15:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Российско-Армянского университета.

Автореферат разослан 30-го мая 2023 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук



Дж.А. Айрапетян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հռչակում և երաշխավորում է հայոց պետականության հիմքում ընկած հիմնարար սկզբունքները: Այդ սկզբունքների մեջ իր առանցքային նշանակությունն ունի ժողովրդախիշխանության սկզբունքը, որն ունի ոչ միայն խորը պատմական արմատներ, այլև հարուստ տեսական և գործնական բովանդակություն: Պատահական չէ, որ ցանկացած ժողովրդավարական և իրավական պետության կարևորագույն հատկանիշը տվյալ պետության ժողովրդի ունեցած հնարավորությունն ու իրական կարողությունն է անմիջականորեն և միջնորդավորված մասնակցելու դրա կառավարմանը: Գ. Հարությունյանն իրավացիորեն նշում է. «Երկրում սահմանադրականության առկայությունը մեծապես պայմանավորվում է նրանով, թե որքանով է ժողովուրդն իրեն իսկ պատկանող իշխանության իրական կրողը»¹:

Այսօր Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի գիտության ամենաարդի հիմնախնդիրներից մեկը անմիջական ժողովրդախիշխանության սկզբունքի երաշխավորումն ու իրացումն ապահովող սահմանադրաիրավական ձևերի իրական գործողության ապահովման հարցն է, քանի որ վերջիններս միտված են հանրային-քաղաքական որոշումների ընդունման գործընթացներում ժողովրդի մասնակցության ավելացմանը: Ընդ որում, յուրաքանչյուր կոնկրետ ձևի իրական գործողության ապահովման համար անհրաժեշտ ամուր իրավական բազայի ստեղծման համար պետք է ուսումնասիրել ընդհանրապես ժողովրդախիշխանության տեսական և գործնական հիմնախնդիրները:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված են անմիջական ժողովրդախիշխանության իրականացման տարբեր ինստիտուտներ, որոնցից մեկն էլ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունն է, որը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրվեց 2015 թվականի փոփոխությունների արդյունքում և անմիջական ժողովրդախիշխանության ինստիտուտների համակարգում հանդիսանում է թերևս ամենախնդրահարույցը տեսական մակարդակում մշակվածության և գործնականում իրացման տեսանկյունից: Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը հնարավորություն է տալիս ժողովրդին նորմատիվ իրավական ակտերի նախագծեր առաջադրելու միջոցով իրականացնել իրեն պատկանող իշխանությունն այնպիսի կարևոր ոլորտում, ինչպիսին իրավաստեղծ գործունեությունն է:

Թեև սահմանադրական վերջին փոփոխություններով այս ինստիտուտի ամրագրումը ուներ հստակ նպատակներ², սակայն պետք է արձանագրել, որ այս ընթացքում հնարավոր չի եղել հասնել այդ նպատակներին, առավելապես նաև այն պատճառով, որ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավական դաշտը բավականին թերի է, և առկա են մի շարք արդիական և համակարգային լուծում պահանջող խնդիրներ: Մինևույն ժամանակ, հայրենական

¹ Հարությունյան Գ., Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան, 2004, էլ. տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://concourt.am/pdf/uploads/621cb78e718d9_041.pdf, էջ 20

² Տե՛ս մանրամասն ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014, էջեր 43-44, էլ. ռեսուրս՝ <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>, հղումն ըստ 01.03.2023թ.

իրավագիտության մեջ բացակայում են այս ինստիտուտի վերաբերյալ համալիր գիտական հետազոտությունները: Ակնհայտ է նաև, որ այս ինստիտուտի զարգացման և կատարելագործման վերաբերյալ բացակայում են հայեցակարգային, ռազմավարական փաստաթղթերը:

Անմիջական ժողովրդաիշխանության սկզբունքի իրացման մյուս ձևերը չեն կարող փոխարինել ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններին, անթույլատրելի է դրանց նույնացումը, մինչդեռ Հայաստանի Հանրապետության օրենսդրության զարգացումն այս հարցում ընթացել է հակառակ տրամաբանությամբ: Փորձ է արվել հանրաքվեի ինստիտուտը կարգավորող իրավական նորմերով միաժամանակ կարգավորել նաև ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության շուրջ ծագող հասարակական հարաբերությունները, ինչը հանգեցրել է մի շարք խնդիրների: Հետաքրքրությունն այս ինստիտուտի ուսումնասիրության նկատմամբ պայմանավորված է նաև ժողովրդաիշխանության համակարգում վերջինիս նշանակության ու դերի բարձրացմամբ:

Ժամանակակից աշխարհում նկատվում է ժողովրդաիշխանության ինստիտուտների իրականացման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների լայնատարած կիրառում, ինչպես նաև պետական իշխանության և հասարակության համագործակցության նոր արդյունավետ մեխանիզմների մշտապես ուղեկցվող փնտրտուք, որպիսի պայմաններում ևս արդիականություն է ձեռք բերում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության բազմակողմ ուսումնասիրությունը:

Հայաստանի Հանրապետությունում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության կիրառման փորձ գրեթե չկա³, որը պայմանավորված է տարատեսակ գործոններով, որոնց բացահայտումը, հետազոտումն ու լուծումը ևս պայմանավորում են սույն հետազոտության արդիականությունը:

Ատենախոսության թեմայի ուսումնասիրությունը հատկապես կարևորվում է ներկա փուլում մեր երկրում ընթացող սահմանադրական փոփոխություններ իրականացնելու միտված գործընթացի համատեքստում⁴:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը. հաշվի առնելով, որ հետազոտության օբյեկտն են կազմում ժողովրդաիշխանության սկզբունքը և ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը, վերջիններիս գիտական մշակվածության աստիճանը կդիտարկենք առանձին:

Հայրենական իրավագիտությունում ժողովրդաիշխանության սկզբունքը տարբեր տեսանկյուններից ուսումնասիրության առարկա է դարձել Ա. Մանասյանի, Ա. Վաղարշյանի, Գ. Դանիելյանի, Գ. Հարությունյանի, Ն. Այվազյանի, Վ. Այվազյանի տարբեր աշխատանքներում, Լ. Մելիքսեթյանի, Մ. Օհանյանի, Ռ. Աբաջյանի, Ռ. Մարանդյանի ատենախոսություններում, ինչպես նաև արտասահմանյան մի շարք

³ Տե՛ս ատենախոսության 3-րդ գլխի 1-ին պարագրաֆը

⁴ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր, հավելված 1, Արդարադատության նախարարության պլանակ, կետ 2, էլ. ռեսուրս՝ <https://www.gov.am/files/docs/5145.pdf>, հղումն ըստ՝ 27.02.2023թ., ՀՀ վարչապետի 2022 թվականի հունվարի 27-ի «Սահմանադրական բարեփոխումների խորհուրդի ձևավորելու, խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու և ՀՀ վարչապետի 2020 թվականի փետրվարի 12-ի թիվ 181-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 111-Ա որոշում, էլ. ռեսուրս՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172714>, հղումն ըստ 27.02.2023թ.

հեղինակների աշխատություններում, որոնց թվում են՝ Ա. Աուերը, Ա.Գ. Մուրաշինը, Ա.Մ. Բուդաբեկան, Դ.Յ. Ուստինովը, Թ. Կրոնինը, Ի.Ս. Ստեպանովը, Լ.Ա. Գրիգորյանը, Լ.Ա. Նուդենկոն, Լ.Ս. Մամուտը, Մ. Ուորենը, Ն.Ա. Բոբրովան, Ն.Մ. Չեպուրնովան, Ն. Ուիլյամսը, Պ.Ա. Աստաֆիչեվան, Զ. Ֆիշկինը, Ս.Ա. Ավագյանը, Վ.Ի. Չերվոնյուկը, Վ.Վ. Լազարեվան, Վ.Վ. Խելվակովը, Վ.Վ. Կոմարովան, Վ.Վ. Կրասինսկին, Վ.Վ. Նեվինսկին, Վ.Տ. Կաբիշեվը, Տ.Մ. Բյակինան, Ֆ. Համոնը:

Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության վերաբերյալ համալիր գիտական հետազոտություններ հայրենական իրավագիտությունում առկա չեն, իսկ այս ինստիտուտին վերաբերող որոշ հարցերի իրենց տարբեր աշխատանքներում անդրադարձել են Գ. Դանիելյանը, Ռ. Աբաջյանը, Ռ. Մարանդյանը, Ս. Բադալյանը, Յ. Մակարյանը: Արտասահմանյան հեղինակներից ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությանն անդրադարձել են Ա.Ն. Կոկոտովը, Ա.Ռ. Գալոյանը, Ե.Ի. Կոզլովան, Ե.Պ. Գուլյան, Թ. Կրոնինը, Թ. Մոզերը, Մ. Կուսահնովան, Մ.Վ. Բազլայը, Մ. Ուորենը, Ն.Ա. Վոլկոդաբեկան, Ն. Ուիլյամսը, Զ. Զիմմերմանը, Զ. Քուփերը, Ռ. Բրիֆոթը, Ռ.Վ. Ենգիբարյանը, Ռ. Սկլովը, Ս.Ա. Ավագյանը, Ս.Ս. Վաժնովը, Վ.Ա. Դմիտրիեվը, Վ.Ե. Չիրկինը, Վ.Ի. Չերվոնյուկը, Վ.Ն. Ռուդենկոն, Վ.Վ. Գրիբը, Վ.Վ. Կոմարովան, Վ.Վ. Մակլակովը, Վ.Վ. Նեվինսկին, Տ.Ա. Կրիվոշեբեկան, Օ.Ե. Կուտաֆինը, Օ.Ն. Շիշլարենսկը, Ֆ. Դուբոյզը, Ֆ. Ֆինին և այլք:

Հետազոտության նորմատիվ և տեսական հիմքերը. ատենախոսության նորմատիվ իրավական հիմքն են կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2005 թվականի և 2015 թվականի փոփոխություններով), սահմանադրական օրենքները, օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը, արտասահմանյան պետությունների սահմանադրությունները և օրենքները, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընտրական իրավունքին վերաբերող վճիռները: Ատենախոսության տեսական հիմքն են կազմել հայ և այլազգի հեղինակների աշխատությունները: Բացի այդ, ատենախոսությունում լայնորեն օգտագործվել են միջազգային իրավական ակտեր, միջազգային կազմակերպությունների զեկույցներ, կարծիքներ, եզրակացություններ, տարատեսակ փաստաթղթեր, վիճակագրական նյութեր, թվային տվյալներ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը. հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ընդհանուր գիտական՝ վերլուծության, սինթեզի, պատմական մեթոդները, ինչպես նաև մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, իրավաբանական վերլուծության, պատմաիրավական, համակարգային-կառուցվածքային մեթոդները:

Հետազոտության նպատակը և խնդիրները. հետազոտությունն ունի երկու հիմնական նպատակներ՝ ժողովրդաիշխանության սկզբունքի տեսագործական ուսումնասիրությունը և ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության իրականացման համակարգում առանձին ինստիտուտի համալիր բազմակողմ ուսումնասիրությունը, գործող իրավակարգավորումների կատարելագործման նպատակով գիտականորեն հիմնավորված մոտեցումների և առաջարկների ներկայացումը:

Վերոնշյալ նպատակները պայմանավորում են հետազոտության առջև դրված հետևյալ խնդիրները.

- բացահայտել սահմանադրական կարգի հիմունքների համակարգը, առկա ներքին կապերը,
 - բազմակողմանիորեն հետազոտել ժողովրդաիշխանության սկզբունքի հասկացությունը և հստակեցնել վերջինիս էությունը,
 - ուսումնասիրել ժողովրդաիշխանության իրացման հիմնահարցերը՝ վեր հանելով անմիջական և ներկայացուցչական ժողովրդաիշխանության բովանդակությունը և վերջիններիս փոխհարաբերակցությունը,
 - հետազոտել Հայաստանի Հանրապետությունում անմիջական ժողովրդաիշխանության իրականացման հիմնական ձևերը,
 - քննարկման առարկա դարձնել ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության հասկացության վերաբերյալ առկա մոտեցումները և դրա հարաբերակցությունը այլ նախաձեռնությունների հետ,
 - բացահայտել ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի էությունն ու նշանակությունը, ինչպես նաև վերջինիս և անմիջական ժողովրդաիշխանության ու դրա առանձին ինստիտուտների միջև առկա կապերը,
 - գնահատել ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը, արտասահմանյան երկրների վերաբերելի օրենսդրության հետ իրականացնել իրավահամեմատական վերլուծություն և ներկայացնել ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի կատարելագործման վերաբերյալ հիմնավորված և համակարգային առաջարկություններ,
 - քննարկման առարկա դարձնել տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման առկա վիճակը անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտների իրականացման գործընթացում, ինչպես նաև դիտարկել դրանց կիրառումը Հայաստանում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի զարգացման և առավել արդյունավետ կիրարկման նպատակով:
- Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը.** ատենախոսության մեջ տեղ գտած մոտեցումները, առաջարկություններն ու եզրահանգումները կարող են նպաստել ժողովրդաիշխանության և մասնավորապես, ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության տեսության զարգացմանն ու աղբյուր հանդիսանալ նոր գիտական հետազոտությունների իրականացման համար:
- Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտին վերաբերող իրավակարգավորումների կատարելագործման նպատակով, ինչպես նաև օգտագործվել այն դասընթացների շրջանակներում, որոնցում ուսումնասիրվում են ժողովրդաիշխանության սկզբունքը, ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը և անմիջական ժողովրդաիշխանության իրականացման այլ ինստիտուտները:
- Հետազոտության օբյեկտը և առարկան.** հետազոտության օբյեկտը ժողովրդաիշխանության, ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության և անմիջական ժողովրդաիշխանության իրականացման այլ ինստիտուտների հետ կապված հարաբերություններն են: Հետազոտության առարկան են հանդիսանում ժողովրդաիշխանության սկզբունքի հասկացության, էության և իրացման վերաբերյալ առկա տեսական մոտեցումները, անմիջական ժողովրդաիշխանության առանձին ինստիտուտների ընդհանուր բնութագիրը, ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության հասկացությունը, բովանդակությունը, հարաբերակցությունը

անմիջական ժողովրդաիշխանության հետ, իրավական կարգավորման հիմնահարցերն ու զարգացման հեռանկարները:

Հետազոտության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները. սույն ատենախոսությունը հանդիսանում է անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձևերից մեկի՝ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության վերաբերյալ առաջին համալիր գիտական հետազոտությունը հայրենական իրավագիտության մեջ:

Ատենախոսության գիտական նորույթն իր արտացոլումն է գտել պաշտպանության ներկայացվող ներքոնշյալ առանցքային դրույթներում.

1. Ժողովրդի կողմից իշխանության անմիջական իրականացման արդյունքում սահմանադրական վերաբերելի նորմերի, այդ թվում՝ սահմանադրական կարգի հիմունքների միջև հնարավոր «բախումները» պետք է դիտարկել գաղափարական-տրամաբանական միասնականության, ինչպես նաև տեսական մակարդակում քննարկվող և Սահմանադրական դատարանի վկայակոչված թիվ ՍԴՈ-1590 որոշմամբ առաջ քաշված սահմանադրական նորմերի աստիճանակարգության կանոնների լույսի ներքո:

Այս համատեքստում հիմնավորվում է այն մոտեցումը, որ ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված «հանրային իշխանություն» հասկացության ներքո, ի թիվս պետական իշխանության և տեղական ինքնակառավարման, պետք է հասկանալ նաև ժողովրդի անմիջական իշխանությունը: Նման պայմաններում անմիջական ժողովրդաիշխանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ևս պետք է սահմանափակված լինի մարդու՝ որպես բարձրագույն արժեքի հիմնական իրավունքներով և ազատություններով, այդ թվում՝ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով:

2. Հայրենական իրավագիտությունում «ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություն» հասկացության վերաբերյալ չկա ձևավորված միասնական մոտեցում, հստակեցված չէ նաև վերջինիս էությունն ու բովանդակությունը: Ժողովրդական, քաղաքացիական բազմատեսակ նախաձեռնությունների մեջ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունն առանձնանում է նրանով, որ ուղղված է նորմատիվ իրավական ակտի նախագիծ առաջադրելու միջոցով օրենսդրության մեջ փոփոխություններ իրականացնելուն:

3. Կատարված հետազոտության արդյունքում առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը դիտարկել՝

ա) որպես իրավական ինստիտուտ, որն այնպիսի իրավական նորմերի ամբողջություն է, որոնք կարգավորում են նորմատիվ իրավական ակտի նախագիծ առաջադրման միջոցով հասարակական հարաբերությունների կարգավորմանն ուղղված ժողովրդի (որոշակի քանակի քաղաքացիների) նախաձեռնության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով քննարկման և որոշման կայացման համար պարտադիր իրականացման ընթացակարգը,

բ) որպես ժողովրդի (որոշակի քանակի քաղաքացիների) օրենսդրությամբ ամրագրված հնարավորությունը՝ նորմատիվ իրավական ակտի նախագիծ առաջադրելու միջոցով իրականացնել իրավական նշանակություն ունեցող այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են նորմատիվ իրավական ակտի ընդունմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը: Ընդ որում, այդ իրավունքին համապատասխանում է

հանրային իշխանության իրավասու մարմինների պարտականությունը ձեռնարկել օրենսդրությամբ սահմանված գործողություններ, այդ թվում՝ պարտադիր քննարկել առաջադրված նախագիծը և կայացնել որոշում դրա վերաբերյալ:

4. Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը, թեև անմիջական ժողովրդահիշխանության այլ ինստիտուտների, մասնավորապես՝ հանրաքվեի և հանրագրերի հետ ունեցած մի շարք ընդհանրություններին և սերտ կապին, հանդիսանում է առանձին, ինքնուրույն ինստիտուտ: Այս արձանագրումն ունի կարևոր տեսական ու գործնական նշանակություն և պետք է որպես ելակետ ընդունվի այս ինստիտուտի պատշաճ իրավական կարգավորման համար:

Մինչդեռ, Հայաստանի Հանրապետությունում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության՝ որպես անմիջական ժողովրդահիշխանության առանձին ինստիտուտի օրենսդրական ամրագրման ոլորտում հաշվի չի առնվել այս առանցքային նշանակություն ունեցող հանգամանքը, ինչի արդյունքում՝ Սահմանադրության և ընթացիկ օրենքների մակարդակում առկա են մի շարք բացեր: Նման գործելակերպի արդյունքում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը մնում է հանրաքվեի «ստվերում» կամ դիտարկվում է որպես վերջինիս հետ պարտադիր փոխկապակցված ինստիտուտ: Ի թիվս այլնի, այսպիսի եզրահանգման վառ ապացույց է նաև այն, որ «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի իրակավակարգավորման առարկան են հանդիսանում բացառապես հանրաքվեի հետ կապված հարաբերությունները, մինչդեռ նույն օրենքով կարգավորված են նաև ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման հետ կապված հարաբերությունները:

5. Գործող օրենսդրության անկատարության պայմաններում՝ տեսական ուսումնասիրությամբ և օրենսդրության համակարգային վերլուծությամբ հիմնավորվել է հանրաքվեով ընդունված օրենքների՝ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների նկատմամբ ավելի բարձր իրավաբանական ուժով օժտված լինելու հանգամանքը:

6. Անմիջական ժողովրդահիշխանության գործող մեխանիզմների արդյունավետության բարձրացման միջոցներից մեկը՝ պատշաճ իրավական դաշտի և տեխնոլոգիական բաղադրիչի լիարժեք ապահովման դեպքում, կարող է դառնալ էլեկտրոնային ժողովրդավարության տարրերի ներդրումը: Էլեկտրոնային ժողովրդավարության վերաբերյալ տեսական մոտեցումները, ինչպես նաև ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման միջազգային փորձը թույլ են տալիս պնդել, որ էլեկտրոնային ժողովրդավարության ընձեռած հնարավորությունները պետք է օգտագործել նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ քննարկվող ինստիտուտը իր գործնական կիրառությունը դեռ չի գտել, իսկ այն կարող է լուրջ խթան դառնալ վերջինիս իրականացման համար: Թեև, հանրային իշխանության մարմինների կողմից ընդունվել են հանրային կառավարման ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ կիրառելու վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, որոնցում խոսվում է նաև քաղաքացիներին ժողովրդավարական գործընթացներում ներգրավելու նոր մեխանիզմների մասին, բայց դրանցում որևէ հիշատակում չկա քննարկվող ինստիտուտում այդ տեխնոլոգիաների ներդրման հարցին:

Այդ նպատակով ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունների արդյունավետ կենսագործման համար առաջարկվում է ներդնել էլեկտրոնային հարթակ, որը հնարավորություն կտա էլեկտրոնային եղանակով առաջադրել նախագծեր՝

օգտագործելով էլեկտրոնային տիպային ձևեր, միանալ առաջադրված նախագծերին, քննարկել դրանք, «իրական ժամանակի ռեժիմում» հետևել գործող նախաձեռնությունների ընթացքին, հավաքված ստորագրությունների քանակին, իրականացնել առաջադրված նախաձեռնությունների քարոզչություն (այդ թվում՝ «կիսվել» դրանցով սոցիալական ցանցերում), հետևել խորհրդարանում նախագծի քննարկման ընթացքին, վարել վիճակագրություն և այլն:

7. «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահվել են ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման գործընթացում բազմաթիվ լիազորություններ, որը չի բխում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանադրաիրավական կարգավիճակից և հակասում է ՀՀ սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին:

8. Ատենախոսությունում հիմնավորվում է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման կառուցակարգում օրենսդրությամբ սահմանված որոշակի շեմերի չափազանց բարձր լինելը: Մասնավորապես.

ա) հիմնավորվում է, որ ժողովրդական օրենսդրական նախաձեռնությանը Սահմանադրությամբ ամրագրված առնվազն հիսուն հազար քաղաքացիների միանալու պահանջը ահռելի մեծ թիվ է, որը պետք է նվազեցնել: Որպես խնդրի լուծում առաջարկվում է առավելագույնը սահմանել քսանհինգ հազար քաղաքացիների կողմից նախաձեռնությանը միանալու պահանջ,

բ) հիմնավորվում է Ազգային ժողովի կողմից ժողովրդական նախաձեռնության կարգով ներկայացված օրինագծի մերժումից հետո այն հանրաքվեի դնելու համար անհրաժեշտ ևս երեք հարյուր հազար քաղաքացիների՝ նախաձեռնությանը միանալու սահմանադրական պահանջի անհրազործելիությունը: Առաջարկվում է այդ շեմը նվազեցնել՝ Սահմանադրության փոփոխությունների օրինակով նախատեսելով նախաձեռնությանը առավելագույնը ևս հարյուր հիսուն հազար քաղաքացիների միացում,

գ) առաջարկվում է Սահմանադրության ընդունման կամ փոփոխման և օրենքների նախագծերի հանրաքվեով ընդունման համար նախատեսել անհրաժեշտ ծայների տարբեր շեմեր՝ հանրաքվեի դրված օրենքների նախագծերի ընդունման համար նախատեսելով ավելի քիչ թվով ծայներ:

9. Չնայած այն հանգամանքին, որ սահմանադիրը նախատեսել է Սահմանադրության փոփոխությունների նախագծի պարտադիր նախնական սահմանադրական վերահսկողություն՝ Սահմանադրական դատարան դիմելու պարտականությունը դնելով Ազգային ժողովի վրա, մյուս կողմից՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը այդ պարտականության իրականացումը պայմանավորել է Ազգային ժողովի ընդունած որոշմամբ:

Սահմանադրության իմպերատիվ պահանջի իրականացումը սահմանադրական օրենքի կարգավորումներից «կախվածության մեջ» դնելն անընդունելի է, ուստի առաջարկվում է նախատեսել այնպիսի կառուցակարգ, որի պարագայում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը մինչև երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելը պարտադիր կարգով Ազգային ժողովի նախագահի կողմից ուղարկվի Սահմանադրական դատարան՝ նախնական սահմանադրական վերահսկողություն իրականացնելու նպատակով:

Առաջարկվում է նաև Ազգային ժողովի կողմից օրենքի նախագիծը մերժելու դեպքում օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու գործող կառուցակարգի փոխարեն՝ օրինագիծը նախաձեռնող խմբի կողմից սկզբում ներկայացվի Սահմանադրական դատարան, և Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում միայն՝ սկսվի անհրաժեշտ ստորագրությունների հավաքման փուլը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. ատենախոսության հիմնական դրույթները իրենց արտացոլումն են գտել գիտական հոդվածներում, ինչպես նաև քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի նիստերում:

Աշխատանքի կառուցվածքը. աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են յոթ ենթագլուխներ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացվում են թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, թեմայի գիտական մշակվածության աստիճանը, նորմատիվ, տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, աշխատանքի կառուցվածքը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

«Ժողովրդաիշխանության սկզբունքի տեսական հիմնախնդիրները» վերտառությամբ 1-ին գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:

«Ժողովրդաիշխանության սկզբունքի հասկացությունն ու էությունը» վերտառությամբ առաջին ենթագլխում ուսումնասիրվում է սահմանադրական կարգի հիմունքների համակարգը և համակարգը կազմող սահմանադրական սկզբունքների միջև գործող ներքին կապերը, այդ թվում՝ դրանց միջև հնարավոր բախումները լուծելու ուղենիշները: Քննարկվում են ժողովրդաիշխանության հասկացության մաս կազմող առանձին եզրույթներ, ժողովրդաիշխանության և ժողովրդավարության հարաբերակցությունը, հետազոտվող սկզբունքի էության վերաբերյալ տեսական մոտեցումները:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում ուսումնասիրվում են ժողովրդաիշխանության իրացման տեսական հիմնախնդիրները: Ժողովրդաիշխանությանը դիտարկվում է որպես ժողովրդի իրավունք և վերջինիս իրացումը հետազոտվում է սուբյեկտիվ իրավունքի իրացման տեսանկյունից: Այնուհետև քննարկման առարկա է դառնում ժողովրդաիշխանության իրավական կարգավորման մեխանիզմը և վերջինիս իրացման երկու հիմնական ձևերը՝ անմիջական ժողովրդաիշխանությունը և ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը: Ներկայացվում են հեղինակի մոտեցումները ժողովրդաիշխանության երկու հիմնական ձևերի համակարգի վերաբերյալ:

«Անմիջական ժողովրդաիշխանության սկզբունքի դրսևորման ձևերը և ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը» վերտառությամբ երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին պարագրաֆում ներկայացվում է անմիջական ժողովրդաիշխանության իրականացման ձևերի ընդհանուր բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորապես հետազոտման առարկա են դառնում ընտրությունները, հանրաքվեն, խաղաղ հավաքները, հանրագրերը, ժողովրդաիշխանության դրսևորումը տեղական ինքնակառավարման մակարդակում: Յուրաքանչյուր ուսումնասիրվող հարցի վերաբերյալ վեր են հանվում որոշակի հիմնախնդիրներ և ներկայացվում են հեղինակի մոտեցումները դրանց վերաբերյալ:

Երկրորդ ենթագլխում հետազոտվում է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության հասկացությունը, էությունն ու բովանդակությունը: Քննարկվում են հետազոտման առարկան կազմող տեսական մոտեցումները, առաջ են քաշվում հեղինակի եզրահանգումներն ու առաջարկները դրանց վերաբերյալ, ընդգծվում են իրավաստեղծ նախաձեռնության երկու առանցքային հատկանիշները՝ նորմատիվ իրավական ակտի նախագծի առկայությունը և իրավասու մարմնի պարտականությունը քննարկելու այն, ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը դիտարկվում է որպես իրավական ինստիտուտ, իրավական ակտերով ամրագրված ժողովրդի

հնարավորություն, ինչպես նաև օրենսդրական գործընթացի փուլ: Ներկայացվում են տարբեր արտասահմանյան հետազոտողների կարծիքները քննարկվող երևույթի դրական և բացասական կողմերի վերաբերյալ:

Երրորդ պարագրաֆում ուսումնասիրվում է անմիջական ժողովրդաիշխանության, դրա իրացման ձևերից՝ հանրագրերի և հանրաքվեի հետ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության հարաբերակցության հարցը: Հարաբերակցության հիմնահարցը հետազոտվում է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման տարբեր կառուցակարգերի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում գործող կառուցակարգի լույսի ներքո: Ներկայացվում են ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությանը բնորոշ առանձնահատկությունները, որոնք թույլ են տալիս այն հստակ գծերով առանձնացնել հանրագրի և հանրաքվեի ինստիտուտներից:

«Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրավական կարգավորման հիմնախնդիրները» վերտառությամբ երրորդ գլուխը կազմված է երկու ենթագլուխներից:

Առաջին ծավալուն ենթագլխում ներկայացվում է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության երկու հիմնական ձևերի՝ օրենսդրական և սահմանադրական նախաձեռնությունների օրենսդրական ամրագրման և իրացման առանձնահատկությունները: Մանրամասն ուսումնասիրության առարկա են դառնում հետազոտվող ինստիտուտին վերաբերող օրենսդրական կարգավորումները Հայաստանի Հանրապետությունում: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ժողովրդի անմիջական նախաձեռնությամբ հանրաքվե անցկացնելու միակ մեխանիզմը ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության միջոցով համապատասխան նախագիծը շրջանառելն է, ուսումնասիրության առարկա են դառնում նաև հանրաքվեի հետ կապված որոշ օրենսդրական իրավակարգավորումներ: Վեր են հանվում մի շարք իրավական խնդիրներ, որոնցից առավել առանցքային բնույթ ունեցողները տեղ են գտել պաշտպանության ներկայացվող դրույթներում: Ներկայացվում են գործող իրավակարգավորումների վերաբերյալ մի շարք առաջարկներ՝ հիմք ընդունելով նաև այլ երկրների փորձը:

Երկրորդ պարագրաֆում դիտարկվում են ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության զարգացման հեռանկարները էլեկտրոնային ժողովրդավարության համատեքստում: Քննարկվում են էլեկտրոնային ժողովրդավարության վերաբերյալ արդի մոտեցումները, ուսումնասիրվում են պետական մարմինների կողմից ընդունված տարբեր ռազմավարական փաստաթղթեր, որոնք միտված են ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմանը հանրային կառավարման ոլորտում: Անդրադարձ է կատարվում հանրային քննարկումների և հանրագրերի իրականացման էլեկտրոնային հարթակներին, ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում էլեկտրոնային ժողովրդավարության տարրերի ներդրման արտասահմանյան երկրների փորձին և առաջ են քաշվում կոնկրետ գաղափարներ Հայաստանի Հանրապետությունում դրանց ներդրման ուղղությամբ:

Եզրակացությունում ներկայացվել են մի շարք ընդհանրացումներ, եզրահանգումներ և առաջարկություններ, որոնցից առավել կարևորները հանգում են հետևյալին՝

1. Ժողովրդաիշխանության սկզբունքը էական դեր է կատարում ՀՀ սահմանադրական կարգի մյուս հիմունքների համար: Այն հիմք է հանդիսանում

տնտեսական, սոցիալական, հոգևոր, մշակութային, գաղափարական, քաղաքական հարաբերությունների զարգացման համար, քանի որ կոչված է նպաստելու պահանջմունքների և շահերի բավարարմանը հասարակության տարբեր ոլորտներում: Միևնույն ժամանակ, մյուս բոլոր հիմունքները ժողովրդաիշխանության զարգացման համար ունեն առանցքային նշանակություն, քանի որ այդ հիմունքներից շատերը հանդիսանում են այնպիսի սկզբունքներ, առանց որոնց ժողովրդավարության գաղափարը կկորցնի իր ողջ իմաստը, իսկ սահմանադրական կարգի մնացած հիմունքները պայմաններ են ստեղծում ժողովրդի իշխանության կյանքի կոչման համար:

2. Ժամանակակից իրավագիտության մեջ ձևավորվել են բազմաթիվ մոտեցումներ ժողովրդաիշխանության հասկացության և էության վերաբերյալ, ինչը առանձնահատուկ կերպով ընդգծում է վերջինիս բազմակողմանիությունը: Չնայած հեղինակների մոտեցումների բազմազանությանը ժողովրդաիշխանության հետ կապված մի շարք եզրույթների բացահայտումը թույլ է տալիս փաստել, որ սահմանադրաիրավական դոկտրինում ժողովրդաիշխանությունը դրսևորվում է որպես ժողովրդավարական համակարգի անքակտելի տարր, ժողովրդավարության՝ որպես Հայաստանի Հանրապետության սահմանադրական բնութագրիչի արտահայտություն: Այն ամրագրված է որպես սահմանադրական կարգի հիմունք, որը սահմանում և երաշխավորում է ողջ իշխանության պատկանելությունը Հայաստանի ժողովրդին: Այն արտահայտվում է ժողովրդական ինքնիշխանության ճանաչմամբ, քաղաքացիների հնարավորություն է տալիս իրացնել իշխանությունն իրենց կամքին համապատասխան՝ սեփական շահերն ու պահանջմունքները բավարարելու համար:

3. Ժողովրդաիշխանության իրացման սահմանադրաիրավական մեխանիզմի ներքո պետք է հասկանալ ՀՀ Սահմանադրության և օրենսդրության մեջ ամրագրված միասնականության և փոխգործակցության մեջ գտնվող այն իրավական միջոցների համակարգը, որոնցով հնարավոր է ժողովրդաիշխանության փաստացի իրացումը: Այլ կերպ ասած՝ ժողովրդի կողմից իր իշխանության իրականացումն իրենից ներկայացնում է սեփական շահերը բավարարելու նպատակով իշխանության իրականացման իրավական միջոցների միասնական համակարգ, որն արտահայտվում է տարբեր ձևերով: Որպես ժողովրդաիշխանության իրականացման ձևեր հանդես են գալիս անմիջական ժողովրդաիշխանությունը և ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը: Անմիջական ժողովրդաիշխանության էական հատկանիշը ժողովրդի կամքի ինքնուրույն արտահայտումն է: Ներկայացուցչական ժողովրդաիշխանության բնորոշ առանձնահատկությունը ժողովրդի պահանջմունքների և շահերի միջնորդավորված արտահայտությունն է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

4. Մեր կարծիքով՝ նախընտրելի է այն մոտեցումը, ըստ որի անմիջական ժողովրդաիշխանությունը դիտվում է որպես իմպերատիվ և խորհրդատվական ինստիտուտների ամբողջություն, որոնցով ժողովուրդը իր կամքը արտահայտում է համապարտադիր որոշումների ընդունման միջոցով, ինչպես նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որոշումներ ընդունելիս իշխանության իրականացմանը մասնակցելով, քանի որ քաղաքացիների կողմից ընդունվող հանրային-իշխանական որոշումների կատարման համապարտադիրությունը՝ որպես այդ ինստիտուտները անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտ դիտարկելու միակ չափանիշ՝ չհիմնավորված

կերպով նեղացնում է անմիջական ժողովրդափշխանության իրացման իրական ոլորտների մասին պատկերացումը: Իսկ ներկայացուցչական ժողովրդափշխանությունն ընդգրկում է հանրային իշխանության մարմինների ամբողջ համակարգը և կոչված է արտահայտելու ժողովրդի կամքն ու գործելու ի շահ նրա:

5. Ժողովրդափշխանության որևէ ձևի առաջնահերթության մասին խոսելը նպատակահարմար չէ: Թե՛ անմիջական, թե՛ ներկայացուցչական ժողովրդափշխանությունը ունեն և՛ առավելություններ, և՛ թերություններ, ուստի երկուսն էլ խիստ անհրաժեշտ են, դրանցից յուրաքանչյուրը լուծում է ինքնուրույն խնդիր և այնպիսի ընթացակարգերով, որոնք չեն կարող լուծվել այլ եղանակով: Դրանք փոխլրացնում են միմյանց, գործում են միասնականորեն, և ժողովրդափշխանության սկզբունքի զարգացումը հնարավոր է միայն ներկայացուցչական և անմիջական ժողովրդափշխանության ներդաշնակ համադրմամբ:

6. Ժողովրդի իշխանության իրականացման ոլորտներում առաջացող հասարակական հարաբերությունների բարդությունն ու դինամիզմը սահմանադրաիրավական նորմերի կատարելագործման օբյեկտիվ նախադրյալ են: Հայաստանի Հանրապետությունում տեղի է ունենում օրենսդրության ինտենսիվ զարգացում՝ անմիջական ժողովրդափշխանության ինստիտուտների իրացման իրավական ապահովման ընդլայնման ուղղությամբ: Ընդ որում, այդ ուղղությամբ ձեռնարկվող իրավական միջոցների ներդրման համար որպես հիմք պետք է հանդիսանան այն սկզբունքներն ու նորմերը, որոնք արտացոլում են պետության զարգացման նպատակներն ու խնդիրները, պետական իշխանության և կառավարման իրականացման, ինչպես նաև քաղաքացիներին քաղաքական իրավունքների լայն շրջանակ վերապահող հիմնարար սկզբունքները:

7. Հանրաքվեի կիրառման օրենսդրական մեխանիզմները պետք է լինեն խիստ հիմնավորված, փաստարկված՝ հիմքում դնելով ներկայացուցչական ժողովրդափշխանության հետ անմիջական ժողովրդափշխանության այս ինստիտուտի ներդաշնակ համադրման ու հավասարակշռված փոխգործակցության մոտեցումը՝ հաշվի առնելով երկուստեք առկա դրական և բացասական կողմերը: Ըստ այդմ, մեզ համար ընդունելի է ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված այն մոտեցումը, ըստ որի՝ Ազգային ժողովի դերակատարումը պարտադիր է Սահմանադրության ընդունման կամ Սահմանադրության մեջ փոփոխությունների իրականացման մեխանիզմում, և այն՝ որ համապատասխան նախագիծը կարող է դրվել հանրաքվեի բացառապես խորհրդարանի որոշման հիման վրա:

8. Տեսական մակարդակում գերակշռում են ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի դերի ու նշանակության վերաբերյալ դրական մոտեցումները: Այն հնարավորություն է տալիս վեր հանել հասարակության իրական պահանջումները, խթանում է քաղաքացիների ներգրավվածությանը, իրավական ակտիվությանը, պետական իշխանության և հասարակության միջև հաղորդակցության հաստատմանը, նպաստում է պետական քաղաքականության և քաղաքացիների հետաքրքրությունների միջև կապի ապահովմանը, պաշտոնատար անձանց քաղաքական պատասխանատվության բարձրացմանը, ինչպես նաև վերջիններիս կողմից ժողովրդի շահերի և հետաքրքրությունների բացահայտմանն ու դրանց հաշվառմանը, հնարավորություն է տալիս խորհրդարանում չներկայացված

քաղաքական կուսակցություններին առաջ քաշել օրինագծեր, որոնք կարտացոլեն հասարակության մեջ առկա այլ քաղաքական և գաղափարական հայացքներ:

9. Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտը ժողովրդափախժխանության այս կամ այն ձևին դասելու համար կարևոր նախապայման է հանդիսանում այն կառուցակարգը, որով ժողովուրդը կյանքի է կոչում իր նախաձեռնությունը: Հայաստանի Հանրապետությունում գործող կառուցակարգի պայմաններում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը պետք է դիտարկել որպես անմիջական ժողովրդափախժխանության իրականացման ինստիտուտ՝ ընդունելով վերջինիս անմիջական կապը ներկայացուցչական ժողովրդափախժխանության հետ:

10. Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը Հայաստանի Հանրապետությունում դրսևորվում է երկու հիմնական՝ ժողովրդական սահմանադրական նախաձեռնության և ժողովրդական օրենսդրական նախաձեռնության ձևերով: Ժողովրդական սահմանադրական նախաձեռնությունը կարող է իրականացվել ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացիների կողմից քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին Սահմանադրության և Սահմանադրության առանձին գլուխներում ու հոդվածներում փոփոխությունների, հարյուր հիսուն հազար քաղաքացիների՝ Սահմանադրության մնացած մասում փոփոխությունների նախագիծ ներկայացնելու միջոցով: Ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունն ամրագրող սահմանադրական հիմնադրույթի ուժով Հայաստանի Հանրապետության ժողովուրդը, ի դեմս՝ հիսուն հազար քաղաքացիների դարձավ օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ժողովրդական սահմանադրական նախաձեռնությունների շուրջ ծագող հարաբերությունները հիմնականում կարգավորում են նույն կերպ, ինչ ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունները և այդ առումով հետազոտության մեջ առաջ քաշված գաղափարներն ու առաջարկները հիմնականում համընկնում են:

Միաժամանակ, չնայած ժողովրդական սահմանադրական և օրենսդրական նախաձեռնությունների համար նախատեսված կառուցակարգերի ընդհանրություններին՝ առկա է էական առանձնահատկություն, որը կայանում է նրանում, որ սահմանադրական նախաձեռնությունը հանրաքվեի դնելու համար պարտադիր պայման է դրա վերաբերյալ Ազգային ժողովի կողմից ընդունվող համապատասխան որոշման առկայությունը. այսպիսի մոտեցման նպատակահարմարությունը հիմնավորվում է մեր կողմից: Իսկ ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունների դեպքում ժողովուրդն ունի Ազգային ժողովի մերժման վերաբերյալ որոշումը «հաղթահարելու» և օրինագիծը անմիջականորեն հանրաքվեի դնելու հնարավորություն՝ նախաձեռնությանը ևս երեք հարյուր հազար քաղաքացիների միանալու դեպքում:

11. «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում առկա են մի շարք բովանդակային և ընթացակարգային բնույթ ունեցող խնդիրներ, մասնավորապես որոշ հոդվածների վերնագրեր չեն համապատասխանում հոդվածի բովանդակությանը, կարգավորված չեն նախաձեռնող խմբի կազմավորման հետ կապված հարաբերությունները, քարոզչության իրականացման հարցը: Ստորագրությունների հավաքման գործընթացի իրավակարգավորումները կապված ժամկետների, հավաքման վայրերի, եղանակների հետ խնդրահարույց են:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի վերաբերելի իրավակարգավորումները ևս թերի են: Ավվածը առավելապես վերաբերում է ժողովրդական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծում փոփոխությունների իրականացմանը: Օրենսդրությամբ թերի են կարգավորված նաև ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունների իրականացման գործընթացում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունվող որոշումների, իրականացվող գործողությունների կամ անգործության բողոքարկման հարցերը:

Վերը նշված բոլոր խնդիրները լրացուցիչ խոչընդոտ են հանդիսանում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունների պատշաճ իրականացման համար, ուստի ներկայացվել են դրանց լուծման և վերաբերելի իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ հիմնավորված առաջարկներ:

12. Իրականացված ուսումնասիրությունն ու առաջ քաշված մոտեցումները թույլ են տալիս փաստել, որ օրենսդրությունն ունի լայնածավալ բարեփոխումների անհրաժեշտություն, որոնք պետք է ուղեկցվեն այնպիսի կառուցակարգերի ներդրմամբ, որոնք համապատասխան երաշխիքներ և գործիքներ կստեղծեն ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի պատշաճ իրականացման համար:

Գտնում ենք, որ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության լիարժեք և պատշաճ իրացման համար անհրաժեշտ մի շարք կարևոր հարցեր (օրինակ՝ ինստիտուտի իրականացման հիմնական երաշխիքները, սկզբունքները, կանոնները) պետք է կարգավորվեն առանձին օրենքով, ուստի առաջարկում ենք ընդունել «Ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունների մասին» ՀՀ օրենք: Մասնավորապես, նպատակահարմար կլինի այդ օրենքում ինչպես ներառել և լավարկել այն կարգավորումները, որոնք այժմ առկա են Սահմանադրական օրենքում, այնպես էլ կարգավորել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ժողովրդական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտի հստակ բնորոշումը, վերջինիս առարկայի հստակ սահմանումը, կիրառման նպատակը, շրջանակները, ընթացակարգը, նախագծի քննարկման առանձնահատուկ կարգն ու ժամկետները, մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները և այլն: Նման օրենքի առկայությունը կվերացնի անմիջական ժողովրդաիշխանության իրականացման այս ձևի իրավական կարգավորման մեջ առկա բացերը, կծառայի օրենսդրական գործունեությանը քաղաքացիների մասնակցությունը խթանելու կարևոր նպատակին, կնպաստի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավաքաղաքական ակտիվության բարձրացմանը:

13. Անմիջական ժողովրդաիշխանության գործող ավանդական մեխանիզմների արդյունավետության բարձրացման միջոցներից մեկը, պատշաճ իրավական հիմքի և կարգավորումների դեպքում, կարող է դառնալ էլեկտրոնային ժողովրդավարության տարրերի ներդրումը: Իհարկե, այն չի երաշխավորում, որ քաղաքացիները պարտադիր կմասնակցեն այդ ինստիտուտների իրականացմանը, սակայն այն էականորեն ավելի լայն և գործուն լրացուցիչ հնարավորություններ կստեղծի, որպեսզի վերջիններս իրացնեն իրենց իրավունքը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ժողովրդավարական, տնտեսական և տեխնոլոգիական զարգացման մակարդակները տարբեր են աշխարհի տարբեր երկրներում և դրա ներդրման հաջողությունը առավելապես կախված է նաև կոնկրետ երկրում թվային տեխնոլոգիաների զարգացման մակարդակից և պետության որդեգրած քաղաքականությունից՝ ներդնելու էլեկտրոնային ժողովրդավարության գործիքները:

Վերջին շրջանում Հայաստանում էլեկտրոնային ժողովրդավարության ներդրման ուղղությամբ ձեռնարկվում են ակտիվ քայլեր, այդ մասին են վկայում ինչպես ընդունված բազմաթիվ փաստաթղթերը, այնպես էլ օրինակ՝ հանրագրերի և հանրային քննարկումների համար ստեղծված էլեկտրոնային հարթակները, որոնք թեև լիարժեք ներուժով դեռ չեն կիրառվում, բայց էականորեն նպաստում են համապատասխան գործընթացների իրականացման արդյունավետությանը և ժողովրդի ներգրավվածությանը:

Էլեկտրոնային ժողովրդավարության վերաբերյալ տեսական մոտեցումները, ինչպես նաև ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման միջազգային փորձը թույլ են տալիս պնդել, որ էլեկտրոնային ժողովրդավարության ընձեռած հնարավորությունները պետք է օգտագործել նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ քննարկվող ինստիտուտը իր գործնական կիրառությունը դեռ չի գտել, իսկ այն կարող է լուրջ խթան դառնալ դրա իրացման համար: Թեև, հանրային իշխանության մարմինների կողմից ընդունվել են հանրային կառավարման ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ կիրառելու վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, որոնցում խոսվում է նաև քաղաքացիներին ժողովրդավարական գործընթացներում ներգրավելու նոր մեխանիզմների մասին, բայց դրանցում որևէ հիշատակում չկա քննարկվող ինստիտուտում այդ տեխնոլոգիաների ներդրման հարցին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Թադևոսյան Ա., «Ժողովրդաիշխանության սկզբունքը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք», «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, հատոր XII, №4, 2021, էջեր 61-66,

2. Թադևոսյան Ա., «Ժողովրդաիշխանության սկզբունքի իրացման որոշ տեսական հիմնախնդիրներ», «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, № 128, 2022, էջեր 58-63,

3. Թադևոսյան Ա., «Հայաստանի Հանրապետությունում անմիջական ժողովրդաիշխանության իրականացման որոշ հիմնահարցեր», «Հանրային կառավարում» գիտական հանդես, 1/2022, էջեր 115-128,

4. Թադևոսյան Ա., «Ժողովրդաիշխանության սկզբունքի հասկացությունն ու էությունը. տեսաիրավական վերլուծություն», «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, № 14, նոյեմբեր 2022, էջեր 15-29,

5. Թադևոսյան Ա., ««Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություն» հասկացությունը, էությունն ու բովանդակությունը», «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2/2022, էջեր 80-93,

6. Թադևոսյան Ա., «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության զարգացման հեռանկարները էլեկտրոնային ժողովրդավարության համատեքստում», «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, № 15, մարտ 2023, էջեր 24-38,

7. Թադևոսյան Ա., «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության օրենսդրական ամրագրման որոշ առանցքային հիմնախնդիրներ», «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան. տեղեկագիր», 1(109) 2023, էջեր 95-123

**ИНСТИТУТ НАРОДНОЙ ПРАВOTВОРЧЕСКОЙ ИНИЦИАТИВЫ КАК ФОРМА
НЕПОСРЕДСТВЕННОГО НАРОДОВЛАСТИЯ**

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 – Публичное право. Защита состоится 11-го июля 2023 года в 15:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепя Эмина 123).

РЕЗЮМЕ

Конституция Республики Армения провозглашает и гарантирует основные принципы, лежащие в основе армянской государственности. Среди этих принципов ключевое значение имеет принцип народовластия, который имеет не только глубокие исторические корни, но и богатое теоретическое и практическое содержание. Не случайно, что важнейшей чертой любого демократического и правового государства является возможность и реальная способность народа данного государства непосредственно и опосредованно участвовать в его управлении.

На сегодняшний день одной из наиболее актуальных проблем науки конституционного права Республики Армения является вопрос обеспечения реального действия конституционно-правовых форм, обеспечивающих гарантирование и реализацию принципа непосредственного народовластия, поскольку последние направлены на расширение участия народа в процессах принятия общественно-политических решений. При этом для создания прочной правовой базы, необходимой для обеспечения реального функционирования каждой конкретной формы, необходимо изучить теоретические и практические проблемы народовластия в целом.

Законодательством Республики Армения закреплены различные институты осуществления непосредственного народовластия, одним из которых является народная правотворческая инициатива, которая была закреплена Конституцией Республики Армения в результате изменений 2015 года и в системе институтов непосредственного народовластия является, пожалуй, самой проблематичной с точки зрения разработки на теоретическом уровне и реализации на практике. Народная правотворческая инициатива дает возможность народу посредством выдвижения проектов нормативных правовых актов осуществлять принадлежащую ему власть в такой важной сфере, как правотворческая деятельность.

Закрепление этого института последними конституционными поправками имело четкие цели, однако следует отметить, что за этот период не удалось достичь этих целей, в основном по той причине, что правовая база, необходимая для полноценной и эффективной реализации народных правотворческих инициатив в Республике Армения, довольна неполная, и есть ряд актуальных и требующих системного решения проблем.

Другие формы реализации принципа непосредственного народовластия не могут

заменить народные правотворческие инициативы, недопустимо их отождествление, в то время как развитие законодательства Республики Армения в этом вопросе шло по противоположной логике. Была предпринята попытка правовыми нормами, регулирующими институт референдума, одновременно урегулировать общественные отношения, возникающие вокруг народной правотворческой инициативы, что привело к ряду проблем. В Республике Армения практически отсутствует опыт применения народной правотворческой инициативы, что обусловлено различными факторами, выявление, исследование и решение которых также обуславливают актуальность данного исследования.

В современном мире наблюдается широкое применение информационно-коммуникационных технологий с целью повышения эффективности процесса реализации институтов народовластия, а также постоянный поиск новых эффективных механизмов сотрудничества государственной власти и общества, в таких условиях также приобретает актуальность многостороннее исследование народной правотворческой инициативы. Изучение темы диссертации особенно важно в контексте проходящего на современном этапе в Республике Армения процесса, направленного на осуществление конституционных изменений.

Исследование преследует две основные цели: теоретико-практическое изучение принципа народовластия и комплексное многостороннее изучение народной правотворческой инициативы как отдельного института в системе осуществления непосредственного народовластия, представление научно обоснованных подходов и предложений с целью совершенствования действующих правовых регулирований. Вышеуказанные цели обуславливают задачи, стоящие перед исследованием.

Предметом исследования являются существующие теоретические подходы относительно понятия, сущности и реализации принципа народовластия, общая характеристика отдельных институтов непосредственного народовластия, понятие, содержание, соотношение народной правотворческой инициативы с непосредственным народовластием, проблемы правового регулирования и перспективы развития.

В отечественной юриспруденции отсутствуют комплексные научные исследования по народной правотворческой инициативе. Данная диссертация является первым комплексным научным исследованием данного института в отечественной юриспруденции.

RUSSIAN-ARMENIAN UNIVERSITY

ARMAN Y. TADEVOSYAN POPULAR LAW-MAKING INITIATIVE INSTITUTE AS A FORM OF DIRECT DEMOCRACY

Competition for the degree of Candidate of Juridical Sciences in the speciality of 12.00.02 - Public Law. The defence of the dissertation is scheduled for 11th July 2023, at 15:00 in a panel session of the Professional Council 063 of Jurisprudence of Russian-Armenian University of the RA Higher Certification Commission (123, H. Emin, Yerevan, 0051)

SUMMARY

The Constitution of the Republic of Armenia proclaims and guarantees the basic principles underlying the Armenian statehood. Among these principles, the principle of democracy is of key importance, which has not only deep historical roots, but also rich theoretical and practical content. It is no coincidence that the most important feature of any democratic and legal state is the possibility and real ability of the people of this state to participate directly and indirectly in its governance.

Today one of the most pressing problems of the science of constitutional law of the Republic of Armenia is the issue of ensuring the real operation of constitutional legal forms providing guarantees and realization of the principle of direct democracy, since the last ones are aimed at expanding the participation of the people in the processes of making socio-political decisions. At the same time, in order to create a solid legal framework necessary to ensure the real functioning of each specific form, it is necessary to study the theoretical and practical problems of democracy in general.

The legislation of the Republic of Armenia establishes various institutions for the implementation of direct democracy, one of which is the popular law-making initiative, which was enshrined in the Constitution of the Republic of Armenia as a result of the amendments of 2015 and in the system of institutions of direct democracy is perhaps the most problematic one from the point of view of its development at the theoretical level and implementation in practice. The popular law-making initiative enables the people, through the nomination of draft normative legal acts, to exercise their power in such an important area as law-making activities.

The consolidation of this institution by the latest constitutional amendments had clear goals, however, it should be noted that during this period it was not possible to achieve these goals, mainly for the reason that the legal framework necessary for the full and effective implementation of popular law-making initiatives in the Republic of Armenia is rather incomplete, and there are a number of problems that require urgent and systemic solution.

Other forms of implementation of the principle of direct democracy cannot replace popular law-making initiatives, their identification is unacceptable, while the development of

the legislation of the Republic of Armenia in this matter followed the opposite logic. An attempt was made by the legal norms regulating the institution of a referendum to regulate simultaneously public relations arising around the popular law-making initiative, which led to a number of problems. In the Republic of Armenia, there is almost no practical experience for the application of the popular law-making initiative, which is because of various factors, the identification, research and solution of which also determine the relevance of this study.

In the modern world a widespread use of information and communication technologies in order to increase the effectiveness of the process of democracy institutions implementation process is observed, as well as the constant search for new effective mechanisms of cooperation between government and society, in which case, a multilateral study of the popular law-making initiative also becomes relevant. The study of the topic of the dissertation is especially important in the context of the ongoing process in the Republic of Armenia aimed at implementation of constitutional amendments.

The research pursues two main goals: theoretical and practical study of the principle of democracy and a comprehensive multilateral study of the popular law-making initiative as a separate institution in the system of direct democracy, the presentation of scientifically well-grounded approaches and proposals to improve the existing legal regulations. The above mentioned goals determine the tasks facing the study.

The subject of the research is the existing theoretical approaches regarding the concept, essence and implementation of the principle of democracy, the general characteristics of individual institutions of direct democracy, the concept, content, correlation of popular law-making initiative with direct democracy, problems of legal regulation and development prospects.

In domestic jurisprudence, there are no comprehensive scientific studies on the popular law-making initiative. This dissertation is the first comprehensive scientific research of this institute in domestic jurisprudence.

A handwritten signature in black ink, appearing to be a stylized name, possibly 'Yegh...' or similar, written in a cursive script.